Հավելված N 1
ՀՀ կառավարության 2023 թվականի
հոկտեմբերի 12-ի N 1763-Լ որոշման

2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-ԻՑ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾՆԵՐԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՑԱՐԱՆՈՒՄ ԲՆԱԿՎԵԼՈՒ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆՆ ՕԺԱՆԴԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ

1. Սույն միջոցառման նպատակն է սոցիալական աջակցություն տրամադրել Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 3-ի N 1675-Լ որոշմամբ հաստատված միջոցառման շրջանակում միանվագ դրամական սոցիալական աջակցության շահառու հանդիսացող անձանց (այսուհետ՝ շահառուներ), բացառությամբ՝

1) բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում ժամանակավոր բնակվող անձանց.

2) պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող տարածքներում ժամանակավոր բնակվող անձանց.

3) բնակչության պետական ռեգիստրում Հայաստանի Հանրապետությունում հաշվառված անձանց:

2. Սույն միջոցառման շրջանակներում սոցիալական աջակցությունը տրամադրվում է ամենամսյա դրամական աջակցության ձևով՝ 2023 թվականի հոկտեմբերից մինչև 2024 թվականի մարտ ամիսը ներառյալ, ամիսների համար:

3. Սույն միջոցառման շահառու՝ մինչև 18 տարեկան երեխայի համար ամսական դրամական աջակցությունը տրամադրվում է նրա ծնողին կամ խնամակալին կամ հոգաբարձուին (այսուհետ՝ բոլորը միասին՝ ծնող):

4. Սոցիալական աջակցության ամսական չափը կազմում է՝

1) ժամանակավոր կացարանում բնակվելու համար, եթե շահառուն Հայաստանի Հանրապետությունում չունի սեփականության (այդ թվում՝ համատեղ կամ

բաժնային) իրավունքով իրեն պատկանող բնակվելու համար նախատեսված անշարժ գույք՝ 40000 դրամ.

2) կոմունալ ծառայությունների դիմաց կատարվող վճարումների համար՝ 10000 դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

13.10.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ